



ՓԱՅՆԱԿ ԾԻԱԾԱՆ
(Ք. Լաթանի ուսանող)

Ն Ո Ր Կ Յ Ա Ն Ք

Եկել եմ ես օտար երկրից անհյուրընկալ ու հեռավոր,
Սրտիս մեջ՝ խիճոց, շրթներիս՝ երգ, անհուն կարոտ՝ հագուստ խորհում,
Վերջացել է իմ կյանքը հին արցունքներովն իր բյուրավոր,
Բախտ եմ գտել ազատ երկրի աշխատանքի ջերմ ցովքերում....:

Էլ չե՛մ տանջվում կյանքի մաշող սև կարիքի մագիլներից,
Աչքերս վառ էլ չե՛ն տեսնում վարձողներիս դեմքը մռայլ,
Ապրում եմ ես իմ մե՛ծ երկրում, երջանկության գիրկն անբախիժ,
Սիրտս բացած իմ ներկայի վառ շողերին հանանչափայլ....:

Անգործությունն էլ չի՛ կարող ինձ սպառնալ, անվերջ բեկեռել,
Ձի սասանի ոտներիս տակ Հայրենիքիս հողը ամուր,
Ձի՛ խորտակվի օջախն իմ սուրբ հաստատանքիս և ամրակուռ,
Ես կհասնեմ վառ գալիքիս՝ ուղիներովն այս անարգել....:

Արևը թո՛ղ հավերժ շողա իմ հայրենի երկնի վրա,
Թո՛ղ միշտ հեղե՛ ինձ տուն կանչող, ինձ կյանք տվող ձայնը բարի,
Թո՛ղ մեր գալիքն առավոտող կարմիր աստղը հար շողշողա,
Կեցցե՛ հավետ երկիրն իմ մեծ, հանգրվանը մեծ հույսերի....:

